

## **Թարգմանության դերը օտար լեզվի ուսուցման գործընթացում**

**Ջադիկյան Նինա,  
Մարգարյան Կարինե**

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-50>

**Հանգուցային բառեր.** *կրթություն, օտար լեզու, համարժեքություն, հաղորդակցություն, հաղորդակցային գործառնություն, տեքստ, մեթոդ, թարգմանիչ*

### **Նախաբան**

Այսօր, առավել քան երբևէ, թարգմանության դերը նշանակալի է, քանզի մեզ շրջապատող աշխարհում մշակույթների և լեզուների բազմազանության մեջ առանց դրա անհնար է հաղորդակցություն ապահովել: Թարգմանությունը հիմնականում ենթադրում է իրադարձությունների հաղորդակցական հաջորդականություն և տարբեր լեզուների ու մշակութային արժեքների բացահայտում և մերձեցում: Թարգմանությունը լեզվական գործունեություն է՝ միտված հաղորդակցության: Այն երկու տարբեր լեզուների հնարավոր հիմքային իմացություն և տիրապետում է ենթադրում: Թարգմանության մեջ՝ որպես կարևոր գիտակարգային և ճանաչողական ոլորտի, առանցքային կարևորություն ունի համարժեքությունը, առանց որի անհնար է պատկերացնել խնդրո առարկայի համապարփակ ուսումնասիրությունը և կիրառումը, ուստի մեր աշխատանքը հիմնականում կառուցում ենք այդ հենքի վրա: Օտար լեզվի ուսուցման գործընթացում սովորողները առաջնահերթ ուսումնասիրում են համարժեքության խնդիրը՝ նախ՝ տեսականորեն, այնուհետև՝ փորձում վերլուծել այն միջմշակութային հաղորդակցության շրջանակներում տարբեր տեսանկյուններից: Թարգմանությունը որպես արդյունավետ մեթոդ, մշտապես եղել է օտար լեզուների դասավանդման հիմքում, քանի որ դրա միջոցով և օգնությամբ է ստեղծվում կապը բնագիր և թիրախ լեզուների միջև: Այն՝ որպես ուսուցման արդյունավետ միջոց, անգնահատելի դերակատարություն ունի միջլեզվական և միջմշակութային խնդիրների լուծման գործում և կիրառվում է գրական, լեզվաբանական, տեսական և գործնական, հմտությունների և ընդհանուր գիտելիքի փոխանցման նպատակով: Ուսումնասիրության հիմնական նպատակն է գիտականորեն արժևորել թարգմանության առանցքային դերը ուսուցման գործընթացում: Թեմայի արդիականությունը օտար լեզվի դասավանդման գործում թարգմանության նկատմամբ ուսանողների, նաև ուրուտի այլ ուսումնասիրողների հարաճուն հետաքրքրությունն է:

Գոյություն ունեցող մոտեցումների բազմազանության հետ մեկտեղ թարգմանությունը եղել է մնում է ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովող կարևոր գործիք, որը կիրառվում է թե՛ օտար լեզվի դասավանդման ընթացքում, թե՛ գրականության, լեզվաբանական, տեսական և գործնական գիտելիքների փոխանցման նպատակով: Հենց թարգմանության շնորհիվ է տեղի ունենում հաղորդակցումը տարբեր ազգերի, մշակույթների միջև, և, բնականաբար, թարգմանությունը ոչ միայն չպետք է դուրս մղվի ուսուցման գործընթացից, այլև ընդհակառակը. անհրաժեշտություն կա, որպեսզի դասավանդողների կողմից մշակվի համապատասխան մեթոդաբանություն օտար լեզվի դասավանդման ծրագրերում թարգմանությունը որպես ուսուցանելու կարևոր միջոց ներառելու համար:

Կարևոր է նկատի ունենալ, որ օտար լեզվի դասավանդման գործընթացում թարգմանության կիրառումը մեթոդաբանական առումով անփոխարինելի դեր ունի: Թարգմանության միջոցով սովորողը կարողանում է ճանաչել իրեն անծանոթ բառերը, ընկալել նախադասության իմաստը, այնուհետև ամբողջ տեքստի իմաստը և այլն:

Թարգմանական համարժեքությունը՝ որպես ոլորտի առաջնահերթ խնդիր, մեծապես կարևորվում է նաև ուսուցման գործընթացում, քանի որ այն ապահովում է բնագիր տեքստի և թարգմանության բովանդակության ընդհանրությունը կամ իմաստային մերձությունը, որը

ոչ այլ ինչ է, եթե ոչ բնագրի և թարգմանվածքի իմաստային հարազատություն: Ըստ տեսաբան-թարգմանաբան Ջ. Քեթֆորդի՝ թարգմանությունը որևէ տեքստ մեկ այլ լեզվի տեքստով փոխարինելու գործընթաց է [4]: Համարժեքության մասին խոսելիս հայտնի տեսաբան Թ. Սավորին շեշտում է ստեղծագործության ձևի և բովանդակության համապատասխանության պահպանման խնդիրը թարգմանվածքում [7]:

Հաշվի առնելով թարգմանական համարժեքության կարևորությունը՝ մենք դասավանդման գործընթացում առանձնակի ուշադրություն ենք դարձնում նախ այդ ոլորտի տեսական արծարծումներին, այնուհետև փորձում դրանք դիտարկել կոնկրետ տեքստերի և հատուկ ընտրված նյութերի շրջանակներում:

Լսարանում տարբեր մեթոդների կիրառմամբ իրականացվող դասերի ընթացքում ձեռք բերված փորձի ամփոփման և վերլուծության արդյունքում պարզվում է, որ համապատասխան հենքային գիտելիքների բացակայության դեպքում նոր մասնագիտական բառապաշարի ընկալմանը հաճախ խոչընդոտում է քերականական կառույցների թերի իմացությունը: Այդ խնդիրը լուծելու համար դասավանդողը պարտավոր է զարգացնել ուսանողի

- քերականական գիտելիքները
- բառապաշարը
- ընթերցողական հմտությունները
- լսողական ընկալման հմտությունները:

Թարգմանելու միջոցով տեքստերը ընկալելի դարձնելով՝ հնարավոր է դառնում սովորողների մոտ զարգացնել նաև բառափոխման հմտությունները: Այս հմտության զարգացումը շատ կարևոր է օտար լեզվի դասավանդման գործընթացում: Այս մեթոդը նպաստում է ուսանողների նոր ձեռք բերած բառապաշարային գիտելիքների էլ ավելի կայունացմանը, քանի որ, երբ նրանք կարողանում են նախադասությունը կամ տեքստի ցանկացած հատված վերարտադրել՝ որոշակի բառեր փոխարինելով իրենց հոմանիշներով կամ բացատրություններով, նոր նյութը լիովին ընկալվում և յուրացվում է, իսկ բառափոխման հմտության շնորհիվ ուսանողը նաև հեշտությամբ կարողանում է տեքստը վերարտադրել և՛ բանավոր, և՛ գրավոր ձևով: Այստեղ կարևոր է նաև բառիմաստի ճիշտ կիրառումն ըստ համապատասխան համատեքստի: Թարգմանությունը կարևոր դեր ունի նաև այլ լեզվական հմտությունների զարգացման գործում՝ ընթերցանության, լսողական ընկալման, գրավոր և բանավոր խոսքի զարգացման և այլն:

Լսարանում թարգմանական հմտությունները զարգացնելու տարբեր մեթոդների շարքում կարելի է առանձնացնել ընթերցանությունը (հետևողական վերլուծական ընթերցանություն):

Ընդհանուր առմամբ մեր աշխատանքը այդ առումով կառուցում ենք համարժեքության հենքի վրա, որը հնարավորություն է ընձեռում տեսական և գործնական ուսուցումը առավել արդյունավետ դարձնելու:

Մեր դասաժամերին մշտապես անդրադարձ ենք կատարում նաև գեղարվեստական տեքստերի թարգմանությանը, քանզի այդ ոլորտի թարգմանությունը ինքնին ստեղծագործական գործունեություն է, որը, բնականաբար, առնչվում է գրականությանը և լեզվին՝ լայն իմաստով, բնագիր, թիրախ լեզուների հարաբերմանը, և աղբյուր լեզվի լեզվաոճական առանձնահատկությունների հնարավորինս պահպանմանը: Միով բանիվ, թարգմանվածքը պետք է դիտարկվի որպես բնագրի լեզվի, գաղափարի, փիլիսոփայության համալիր մեկնություն [9]: Գործնական դասերի ընթացքում առանձնակի ուշադրություն ենք դարձնում կոնկրետ նյութի թարգմանություն իրականացնող սկսնակ ուսանող-թարգմանչին և փորձում օժանդակել նրա զարգացման ընթացքին՝ խրախուսական տարբեր միջոցներով:

Թարգմանություն մեջ համարժեքության խնդիրը էական և վճռորոշ նշանակություն ունի, առանց որի անիմաստ կլինեք խնդրո առարկան քննարկել և ուսումնասիրել ոչ միայն առանձին թարգմանչի կողմից, այլև ուսումնական գործընթացում ընդհանրապես և նույնա-

նուն դասընթացի շրջանակներում, մի բան, որը մեզ համար առանձնակի կարևորություն ունի:

Թարգմանական համարժեքության խնդիրը լայնորեն քննելիս առաջնահերթ ենք համարում այն դիտարկել նաև միջմշակութային երկխոսության համաշարում՝ հաղորդակցության հենքի վրա և շրջանակներում, քանզի կենդանի խոսքը, լինելով ասելիքաշատ, կարող է համապարփակ պատկերացում տալ գեղարվեստական նյութի, նրանում գործող անձանց հուզական աշխարհի մասին, որն էլ թարգմանչին կօգնի առավելապես ըմբռնել հեղինակային ասելիքը և հավուր պատշաճի ներկայացնել այն թիրախ լեզվում [9]: Մ. Բեյքերը համարժեքությունը դիտարկում է՝ հենվելով ձևային կողմի վրա: Նրա կարծիքով համարժեքությունը կարելի է բաժանել հինգ մակարդակների՝ համարժեքություն բառային մակարդակում, այդ մակարդակից բարձր, քերականական համարժեքություն, տեքստային և գործառական համարժեքություն [3]: Թարգմանության մեջ համարժեքության դերը առաջնահերթ համարելով՝ տեսաբան Փ.Նյումարքը նշում է համարժեքության երեք տեսակ՝ մշակութային, գործառական և նկարագրական [5]: Այստեղ մշտապես զուգահեռ կարևորվում է թարգմանության հաղորդակցային գործոնը, որին անդրադարձել է նաև Գ. Հովհաննիսյանը: Հստակ նրա՝ նշանակություն ունի երկու լեզու-նշանակարգերի և մշակույթ համատեքստերի հաղորդակցման գործոնը [8]: Թարգմանության ուսումնասիրության և նյութի գործնական կիրառման տիրույթում մեծապես կարևորվում է բնագիր և թարգմանվող տեքստերի մշակութային առնչությունը: Տեսաբան Յ. Նայդան նշում է թարգմանվող և մայրենի լեզվի մշակույթների կարևորությունը և եզրահանգում, որ մշակութային տարբերությունների առկայությունը առավել դժվարություն է ստեղծում, քան լեզվականը [6]: Թարգմանության շուրջ կան նաև տարբեր հակասական տեսակետներ և մոտեցումներ, այսպես օրինակ Հ. Բրաունը գտնում է, որ ուսումնական գործընթացում թարգմանությունն «անհարմար գործիք է» լեզու սովորելու համար, որովհետև ուղղակի հաղորդակցվելն ու անմիջական շփումն առավել կարևոր են [2]: Մասնակիորեն համաձայնելով այդ տեսաբանի հետ՝ մինչև նյ, մեծապես կարևորում ենք թարգմանության գործառումը ուսուցման գործընթացում որպես արդյունավետ գործիք և մեթոդ: Անհրաժեշտ է նկատի առնել այն, որ օտար լեզվի դասավանդման գործընթացում թարգմանության կիրառումը մեթոդաբանական առումով անփոխարինելի դեր ունի, քանզի դրա միջոցով սովորողը կարողանում է ընկալել տեքստի ամբողջական իմաստը, բուն ասելիքը: Լեզվի ուսուցման թե սկզբնական շրջանում և թե հետագայում թարգմանության միջոցով կապ է ստեղծվում լեզվական հնարավոր բոլոր համարժեքային բաղադրիչների միջև: Սովորողների ուսումնառության ողջ ընթացքում թարգմանության մասնագիտական դասերին հարկ է գործածել հնարավոր արդյունավետ միջոց-հնարներ, որոնց օգնությամբ հաղթահարվում են տարբեր բնույթի խույթեր և դժվարություններ: Առավել արդյունավետ հնարներից ենք համարում ասելիքի ընդհանրացումը, կոնկրետացումը, հարմարեցումը, մտքի ընդլայնումը, նյութի բացատրումը, նկարագրությունը և այլն: Մենք գտնում ենք, որ ուսուցման գործընթացում միաժամանակ կարելի է գործածել զուգահեռ-հանդիպական թարգմանություն ինչպես բանավոր, այլև գրավոր տեքստերի հետ աշխատելիս: Կարելի է նաև կատարել արագ կամ փոխադրություն-թարգմանություն, գեղարվեստական տեքստերի թարգմանություն, նույնական-ՀՀգրիտ թարգմանություն, որոնց հիմնական նպատակը հնարավոր հարագատ համարժեքության հասնելն է: Հստ Լ. Բեչմանի՝ լեզվի ուսուցման գործընթացը ներառում է գնահատում, պլանավորում և կատարում [1]: Դրանք, հիշավի, կարևոր բաղադրիչներ են, սակայն միայն ուսուցման նախնական շրջանում: Ուսուցման գործընթացում կարևոր տեղ է գրավում ընտրված տեքստերի ընթերցանությունը որպես լեզվական հմտությունների զարգացման միջոց, որն առավել արդյունավետ է խմբային աշխատանքի ձևով՝ նպաստելով սովորողների լեզվական ընկալմանը և ինքնուրույն մտածելու կարողությանը: Այստեղ առաջանում է նաև մրցակցային մոտեցում, որը առավել հետաքրքիր և միաժամանակ խթանող միջոց է դառնում մասնակիցների շրջանում:

Ընդհանուր առմամբ, թարգմանվող նյութի ընտրությունը խիստ էական է բառապաշարի և թեմաների առումով: Այստեղ նաև պետք է ուշադրություն բերել սովորողի գիտելիքի և ընդհանուր իմացության ստուգման ձևերի վրա: Դրանք պետք է լինեն ոչ միայն գրավոր հարցաշարային, այլև բանավոր հարցումների ձևով: Մեր բազմամյա փորձը ցույց է տալիս, որ ընդունված թեստերը, որպես գիտելիքի ստուգման ժամանակակից ձևեր, իրենց առանձնապես չեն արդարացնում, քանի որ դրանք հոգեբանական տեսանկյունից ամլացնում են սովորողի մտածողությունը և ստեղծագործելու ունակությունը: Մեր խորին համոզմամբ, դրանք այլևս հնացած են, կամ աովազն պետք է ձևի և բովանդակության առումով փոխվեն: Թարգմանությունը նշանակալի դեր ունի ոչ միայն ուսուցման տարրական, միջին և ավարտական օղակներում, այլև բարձրագույն կրթության մեջ, թեև վերջինում օտար լեզվի ուսուցման նպատակը, մեթոդներն ու բովանդակությունը էապես տարբերվում են նախորդներում կիրառվող միջոցներից: Բուհական կրթության մակարդակում ուսանողը թարգմանության դասերին առաջնահերթ ծանոթանում է տարբեր տեսաբանների առաջարկած արդյունավետ մեթոդներին՝ շեշտը գլխավորապես դնելով համարժեքության խնդրին՝ որպես համար առաջին կարևորություն խնդրո առարկայի դիտարկման հարցում:

Այսպիսով, թարգմանության դիտարկումը տեսական դիտանկյունից և համապատասխան տեքստերի ու նյութերի անմիջական գործնական վերլուծությունները օտար լեզվի ուսուցման գործընթացում, հիրավի, լավագույնս կարող են ապահովել և զարգացնել սովորողների լեզվաիմացական պատկերացումներն ու հմտությունները:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-50>

### Գրականություն

1. Bachman L. F. Fundamental Correspondence in Language Teaching, Oxford University Press, 1990.
2. Brown H. D. Teaching by Principle. An Interactive Approach to Language Pedagogy. Third Edition. New York: Pearson Longman, 2007.
3. Baker M. In Other Words. A Course Book on Translation, New York: Routledge, 1992.
4. Catford J. C. A Linguistic Theory of Translation. An Essay in Applied Linguistics. London: Oxford University Press, 1965.
5. Newmark P. A textbook of Translation, New York & London: Prentice Hall, 1988.
6. Nida E. Principle for Correspondence. In Venuti I (ed.). The Translation Studies Reader. Routledge, London, 1964.
7. Savory Th. The Art of translation, London, 1968.
8. Հովհաննիսյան Գ. Ռ., Հոգելեզվաբանության ներածություն. Համառոտ դասընթաց, Երևան, Զանգակ-07, 2002:
9. Ջաղիյան Ն. Ա., Մտորումներ գեղարվեստական թարգմանության համարժեքության շուրջ, VII международная научная конференция: материалы научной конференции, Ереван, 2025.

### Роль перевода в процессе обучения иностранным языкам

*Джагинян Нина,  
Саргсян Карине*

#### Резюме

**Ключевые слова:** образование, иностранный язык, эквивалентность, коммуникация, коммуникативная функция, текст, метод, переводчик

Перевод играет ключевую и уникальную роль в процессе изучения иностранного языка,

помогая учащимся приобретать всесторонние знания и эффективно применять их в будущем. Перевод играет неоценимую роль и значение в развитии языковых навыков, уделяя особое внимание чтению, пониманию текста и развитию устной и письменной речи. Благодаря переводу оцениваются способности двух разных языков, а полученные навыки гарантируют получение знаний учащимися. Достаточное владение навыками перевода развивает самостоятельность мышления учащихся, а также их способность анализировать материал. Наше исследование подтверждает, что использование перевода в образовательном процессе как более эффективного метода улучшает и стимулирует практическую языковую деятельность обучающихся, их способность к самостоятельной деятельности, восприятие нюансов перевода иноязычных текстов, а также способность преобразовывать устную и письменную речь в необходимые навыки. В нашем исследовании мы также включили взгляды и подходы ряда известных теоретиков, связанных с изучаемой проблемой, в основном, по вопросам эквивалентности, важной и ключевой в данной области. Мы также посчитали важным провести параллель между межкультурной коммуникацией и другими проблемами перевода и подходами к эквивалентности в ходе обсуждения. Роль перевода в обучении важна, необходима и бесценна не только как языковой инструмент, но и как практическое средство и условие построения и развития межъязыковых отношений.

## The Role of Translation in the Foreign Language Teaching Process

*Jaghinyan Nina,  
Sargsyan Karine*

### Summary

**Key words:** *education, foreign language, equivalence, communication, communicative function, text, method, translator*

Translation plays a key and unique role in the process of learning a foreign language, helping learners acquire comprehensive knowledge and apply it effectively in the future. It plays an invaluable role and significance in the development of language skills, with particular emphasis on reading, text comprehension, and the development of oral and written speech. Through translation, two different languages are assessed with their capabilities, and the skills ensure the knowledge acquired by the learners. Our study confirms that the use of translation in the educational process as a more effective method improves and stimulates learners' practical linguistic activity, their ability to act independently, their perception of the translation nuances of foreign texts, and their ability to transform oral and written speech into necessary skills. In our research, we have also included the views and approaches of a number of well-known theorists related to the issue under study, mainly on issues related to equivalence, an important and key issue in the field. We also considered it important to parallel intercultural communication with other translation issues and equivalence approaches during the discussion. The role of translation in teaching is important, necessary, and invaluable not only as a language tool, but also as a practical means and condition for building and developing interlingual relationships.

Ներկայացվել է 15. 04. 2025 թ.  
Գրախոսվել է 23. 09. 2025 թ.  
Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.